

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ Խորհրդի

«14» նոյեմբեր 2008 թ.

թիվ որոշմամբ

*Խորհրդի նախագահ՝*

*Յու. Սկրտումյան* \_\_\_\_\_



**«ԳԼԱՁՈՐ ՈՒՎԿ» ՓԲԸ**

**ՎԱՐԿԵՐԻ ՈՒ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ (ԱԿՏԻՎՆԵՐԻ) ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ**

**ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

## 1. Ընդհանուր դրույթներ և սահմանումներ

1.1. Սույն կանոնակարգը մշակվել է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի (27.04.1999թ.) և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (04.06.1999թ.) կողմից հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» (այսուհետև՝ «Կարգ») և կանոնակարգում է «Գլաճոր ՈՒՎԿ» ՓԲԸ (այսուհետև՝ Վարկային կազմակերպություն) **վարկերի ու դեբիտորական պարտքերի** դասակարգումը, հնարավոր կորուստների համար պահուստների ձևավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրսգրման, տոկոսների (և (կամ) տուժանքների) հաշվառման, ծանուցման հաշիվներում գրանցված ակտիվների և տոկոսների հաշվառման հարցերը:

1.2. Սույն կանոնակարգի նպատակն է Վարկային կազմակերպության կողմից «Կարգ»-ի դրույթներին համապատասխան, իր **ակտիվների դասակարգումը** և դրանց հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը, որը հնարավորություն կտա Վարկային կազմակերպությանն արդեն պարզ դարձած կամ դեռևս անհայտ և ապագայում հնարավոր կորուստների գնահատման հիման վրա, եկամուտների և ծախսերի ճշգրտման միջոցով իրական գնահատական տալ ակտիվներին, այնպես, որ ակտիվներն ու եկամուտները գերազնահատված չլինեն, իսկ պարտավորություններն ու ծախսերը՝ թերազնահատված, միևնույն ժամանակ թույլ չտալով թաքցված պահուստների ստեղծում և բացառելով շահույթի գերազնահատումն ի հաշիվ վատորակ ակտիվների դիմաց տոկոսների հաշվեգրման:

1.3. Սույն կանոնակարգի դրույթների, ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման պատասխանատվությունը կրում են Վարկային կազմակերպության գործադիր տնօրենը, Գլխավոր հաշվապահը և Վարկային բաժինը:

1.4. Համաձայն «Կարգի» և սույն կանոնակարգի իմաստով՝ **Վարկեր և դեբիտորական պարտքեր (այսուհետև՝ ակտիվներ)** են համարվում Վարկային կազմակերպության հաշվին (ռիսկով) տեղաբաշխված վարկերը (այդ թվում՝ օվերդրաֆտ, վարկային քարտեր, բանկերում (բացառությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի) ներդրված ավանդներ (այդ թվում՝ նաև բանկային ոսկով)), ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (ֆինանսական լիզինգ), բանկային երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահանջները, Վարկային կազմակերպության ռիսկով ակտիվային այլ գործառնությունների (արժեթղթերում ներդրումներից՝ միայն մուրհակների) գծով ստացվելիք գումարները և (կամ) երրորդ անձանց նկատմամբ այլ պահանջները (ներառյալ կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը, բանկերում թղթակցային (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի) և ստեղծված հաշիվները, բանկերի նկատմամբ հաշվարկների գծով կարճաժամկետ պահանջները, հաճախորդներին մատուցված ծառայությունների գծով ստացվելիք գումարները, ստացվելիք այլ գումարները, Վարկային կազմակերպության աշխատակիցներին տրված առհաշիվ գումարները, մատակարարներին տրված կանխավճարները, նախավճարները, այլ ընթացիկ ակտիվները), Վարկային կազմակերպության համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները, ինչպես նաև «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) և ավել վճարված կամ գանձված սոցիալական վճարների գումարները:

Դասակարգման ենթակա չեն սույն կետում նշված ակտիվների գծով հաշվարկված (ստացվելիք) տոկոսները (և (կամ) տուժանքները):

1.5. **Ակտիվների դասակարգումը** սույն կանոնակարգի 1.4. կետում նշված դասակարգման ենթակա ակտիվների խմբավորումն է, ելնելով դրանց խնդրահարույց (պրոբլեմային) կամ ոչ խնդրահարույց լինելուց, հետևյալ 5 դասերի.

ա) **ստանդարտ**՝ ոչ խնդրահարույց ակտիվների համար, և

բ) **հսկվող**, գ) **ոչ ստանդարտ**, դ) **կասկածելի** ու և) **անհուսալի**՝ խնդրահարույց ակտիվների համար: Հսկվող ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասերի մեջ խմբավորված ակտիվները միասին կոչվում են **դասակարգված ակտիվներ**, իսկ բոլոր ակտիվները՝ **համախառն ակտիվներ**:

1.6. Սույն կանոնակարգի նպատակից ելնելով՝ Վարկային կազմակերպությունը ստանդարտ ակտիվների համար ձևավորում է **ընդհանուր պահուստ**, իսկ դասակարգված ակտիվների համար՝ **հատուկ պահուստ**:

1.7. **Ընդհանուր պահուստը** հաշվեկշռում ակտիվին **հակակշիռ գրանցված** պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին: Ընդհանուր պահուստին կատարվող հատկացումները ճանաչվում (գրանցվում) են որպես ծախս

Վարկային կազմակերպության «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում ելնելով ակտիվների գծով դեռևս չբացահայտված և ապագայում հնարավոր կորուստների առաջացման հավանականությունից:

1.8. **Հատուկ պահուստը** հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է դասակարգված ակտիվների գծով կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին: Հատուկ պահուստին կատարվող հատկացումները ճանաչվում (գրանցվում) են որպես ծախս Վարկային կազմակերպության «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում ելնելով վերոհիշյալ ակտիվների գծով արդեն բացահայտված հնարավոր կորուստների առաջացման հավանականությունից:

1.9. Վարկային կազմակերպությունն ակտիվների հնարավոր կորուստների համար պահուստավորում իրականացնում է ելնելով ակտիվների դասակարգման **օբյեկտիվ** և **սուբյեկտիվ** չափանիշների:

1.10. **Օբյեկտիվ չափանիշները** հիմնված են ակտիվի որպես **չաշխատող** դասակարգվելուց հետո անցած օրերի վրա:

1.11. **Չաշխատող** ակտիվներին են դասվում

1.11.1. այն ակտիվները որոնց,

ա) հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումը ուշացել է սահմանված ժամկետից, կամ

բ) տոկոսային վճարները կապիտալացվել են, կամ

գ) վճարման պայմանները վերանայվել են (բացառությամբ՝ կետում նշված դեպքում),

1.11.2. այն ակտիվները, որոնց համար սահմանված չեն մարման նախապես որոշված ժամկետներ (օվերդրաֆտները և այլ գործիքները), համարվում են չաշխատող ակտիվներ, եթե 90 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն համապատասխան ժամանակահատվածում կապիտալացված (հաշվեգրված) տոկոսները մարելու համար.

1.12. Սույն կանոնակարգի իմաստով՝ **ժամկետանց** ակտիվները (և (կամ) տոկոսները) այն ակտիվներն (և (կամ) տոկոսներն) են, որոնք չեն մարվել (վճարվել) սահմանված ժամկետին և որոնց մարման (վճարման) ժամկետները չեն վերանայվել մինչև սահմանված ժամկետի լրանալը:

1.13. **Վերանայված պայմաններով** ակտիվները (և (կամ) տոկոսները) այն ակտիվներն (և (կամ) տոկոսներն) են,

ա) որոնք պայմանագրի համաձայն **վերաֆինանսավորվել են** կամ,

բ) որոնց մարման (վճարման) ժամկետները կամ այլ պայմանները վերաձևակերպվել են, գումարները փոխանցվել են ակտիվային նոր գործիքներին կամ,

գ) պայմանները վերանայվել են այլ կերպ՝ փոխառուի (պարտապանի) համար առավել նպաստավոր ուղղությամբ, որը պայմանավորված է նրա վատ ֆինանսական դրությամբ և (կամ) նրա պարտքը մարելու կարողությամբ (բացառությամբ՝ Վարկային կազմակերպության կողմից տրամադրված երաշխավորությունների պայմանների վերանայումը, որը Վարկային կազմակերպությունը կատարել է հիմնվելով պարտապանի (փոխառուի) և նրա գործնկերոջ միջև (առանց Վարկային կազմակերպության միջամտության) կնքված փոխադարձ համաձայնության հիման վրա և որը պայմանավորված չէ պարտապանի (փոխառուի) վատ վիճակով) կամ,

դ) որոնց գումարները փոխանցվել են ակտիվային (վարկային) նոր գործիքներին:

1.14. **Վերաֆինանսավորված** ակտիվներն (և (կամ) տոկոսները) այն ակտիվներն (և (կամ) տոկոսներն) են, որոնք մարվել (վճարվել) են նոր ստանձնված պարտավորությունների աղբյուրների հաշվին:

1.15. **Տոկոսների կապիտալացումը** գործընթաց է, որի արդյունքում չվճարված տոկոսները վճարման կամ ակտիվի մարման օրը գումարվում են ակտիվի չմարված մասին:

1.16. **Չճանաչված տոկոսային եկամուտը** չաշխատող ակտիվների գծով հաշվեգրված, սակայն դեռևս փաստացի չհավաքագրված տոկոսը (և (կամ) տուժանքն) է: «Չճանաչված տոկոսային եկամուտը» գրանցվում է հաշվեկշռում ակտիվին հակակշիռ սկսած ակտիվը որպես չաշխատող դասակարգվելու պահից:

1.17. Սույն կանոնակարգի իմաստով՝ **ապահովվածության չունեցող (բլանկային)** են դասվում այն ակտիվները (կամ դրանց մասերը) որոնք բավարարում են ներքոհիշյալ բոլոր պայմաններին միաժամանակ՝

ա) ապահովված չեն գրավով և

բ) առնվազն նախորդ հաշվետու և ընթացիկ ժամանակաշրջանում շահույթով աշխատած իրավաբանական անձի երաշխավորությամբ կամ երաշխիքով, բյուջետային երաշխիքով և

գ) ապահովված չեն պարտապանի (փոխառուի) ֆինանսական վիճակը (այդ թվում՝ ֆինանսական հոսքեր) բնութագրող ցուցանիշների բավարար տեղեկատվությամբ և

դ) ապահովված չեն պարտապանի (փոխառուի) վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ (գործարար ծրագրեր, պայմանագրեր և այլն), ինչպես նաև այլ հիմնավոր փաստաթղթերով և ե) չեն հանդիսանում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման համար կատարված կանխավճար կամ առհաշիվ տրված գումար:

1.18. **Սուբյեկտիվ չափանիշները** հիմնված են Բա Վարկային կազմակերպության և ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ծառայության դատողությունների և մասնագիտական կարծիքի վրա, որոնք պետք է համարժեք լինեն «Կարգում» սահմանված և սույն կանոնակարգի 1.20.-1.24. կետերում տրված ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի ակտիվների սահմանումների հետ:

1.19. Վարկային կազմակերպությունը բանկային համակարգի կողմից միևնույն փոխառուին տրամադրված ակտիվները դասակարգում է միասնական ամենախիստ դատով՝ առաջնորդվելով վարկային ռեզիստից ստացված տեղեկատվությամբ:

1.20. **Ստանդարտ ակտիվներին** են դասվում.

1.20.1. Ըստ օբյեկտիվ չափանիշի՝ մինչև չաշխատող դասակարգվելը,

1.20.2. Ըստ սուբյեկտիվ չափանիշի՝ այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն: Ստանդարտ ակտիվների պորտֆելն իրենից ներկայացնում է համախառն և դասակարգված ակտիվների տարբերությունը: Որպես ստանդարտ դասակարգված ակտիվների գծով պարտապանի (փոխառուի) ֆինանսական վիճակը և պարտավորությունները կատարելու ունակությունը Վարկային կազմակերպության մոտ կասկած չի հարուցում, անկախ ապահովվածությունից, այսինքն՝ Վարկային կազմակերպությունը գտնում է, որ ակտիվի մարման առաջնային աղբյուրները բավարար են և անհրաժեշտություն չկա դիմելու դրա մարման երկրորդային աղբյուրներին, որպիսիք են՝ գրավի, գույքի վաճառքը, կապիտալի նոր (արտաքին) աղբյուրների հայթայթումը և այլն: Սակայն, բոլոր դեպքերում Վարկային կազմակերպությունը հաշվի է առնում նաև ակտիվի բավարար ապահովվածությունը ինչպես պարտքի հիմնական գումարի, այնպես էլ ստացվելիք տոկոսների գծով:

Ստանդարտ ակտիվների գծով ձևավորվում է միայն ընդհանուր պահուստ:

1.21. **Հսկվող ակտիվներին** են դասվում.

1.21.1. Ըստ օբյեկտիվ չափանիշի՝ մինչև 90 օր որպես չաշխատող դասակարգված ակտիվները,

1.21.2. Ըստ սուբյեկտիվ չափանիշի՝ այն ակտիվները, որոնք ամբողջությամբ համապատասխանում են 1.20.2. կետում ներկայացված ակտիվների սահմանմանը.

1.22. **Ոչ ստանդարտ ակտիվներին** են դասվում.

1.22.1. Ըստ օբյեկտիվ չափանիշի՝ 91-ից մինչև 180 օր չաշխատող ակտիվները,

1.22.2. Ըստ սուբյեկտիվ չափանիշի՝ այն ակտիվները, որոնք խնդրահարույց են և որոնց գծով պարտապանի (փոխառուի) կողմից պայմանագրային պարտավորությունները պատշաճ ձևով չեն կատարվում, մասնավորապես տոկոսների գծով վճարումները չեն կատարվում: Ոչ ստանդարտ ակտիվներն ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարվելը: Այսինքն՝ ակտիվի մարման առաջնային աղբյուրները բավարար չեն, և Վարկային կազմակերպությունը պետք է դիմի նրա մարելու երկրորդային աղբյուրներին: Ոչ ստանդարտ ակտիվի համապատասխան դասակարգումը պարզելու համար Վարկային կազմակերպությունը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

ա) Պարտապանի (փոխառուի) ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների էական վատթարացումը և (կամ) անբավարար աստիճանը, մասնավորապես՝ ֆինանսական կայունության (օրինակ՝ դրամական միջոցների հոսքի), հուսալիության կամ վարկունակության, շահութաբերության մակարդակի և այլն,

բ) Կապված պարտապանի (փոխառուի) ոչ բարվոք ֆինանսական դրության հետ՝

✓ ակտիվի գծով մարումները (վճարումները) կատարվում են անկանոն և (կամ) ժամկետների խախտումներով, կամ

✓ ակտիվի գծով պարտավորությունները չեն կատարվում նախնական պայմանավորվածության համապատասխան, և որոնք վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են, կամ

✓ ակտիվի սպասարկման պայմաններն անընդհատ վերանայվում են, կամ

✓ նրա կողմից ավելի նպաստավոր պայմաններով ակտիվի մարման վերաբերյալ առաջարկով հանդես գալը,

գ) պարտապանը հրաժարվում է պարտավորությունները պատշաճ կատարելուց,

դ) ակտիվը պարունակում է սովորականից ավելի մեծ ռիսկ՝ կապված պարտապանի ֆինանսական վիճակի կամ գրավի վերաբերյալ անբավարար տեղեկատվություն, կամ նրա բացակայության հետ,

ե) ոչ համարժեք ապահովվածության (գրավ, երաշխիք, երաշխավորություն, պոլիս և այլն) առկայությունը կամ նրա որակի կտրուկ վատթարացումը,

զ) պարտապանի վատ համբավը:

Ոչ ստանդարտ ակտիվների գծով ձևավորվում է միայն հատուկ պահուստ:

**1.23. Կասկածելի ակտիվներին** են դասվում.

1.23.1. Ըստ օբյեկտիվ չափանիշի՝ 181-ից մինչև 270 օր շաշխատող ակտիվները,

1.23.2. Ըստ սուբյեկտիվ չափանիշի՝ այն ակտիվները, որոնք ունեն ոչ ստանդարտ ակտիվներին բնորոշ բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Կասկածելի ակտիվների դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է, բայց նրանց չափերը պարզ չեն, և Վարկային կազմակերպությունը գտնում է, որ դեռևս հնարավոր է բարելավել այդ ակտիվների որակը: Այսպիսով, կասկածելի ակտիվի դասակարգումը որպես անհուսալի հետաձգվում է մինչև վերջինիս հետ կապված հանգամանքների հստակեցումը:

Կասկածելի ակտիվների գծով ձևավորվում է միայն հատուկ պահուստ:

**1.24. Անհուսալի ակտիվներն** են դասվում.

1.24.1. Ըստ օբյեկտիվ չափանիշի՝ 271 և ավելի օր շաշխատող ակտիվները,

1.24.2. Ըստ սուբյեկտիվ չափանիշի՝ անհավաքագրելի և ցածրարժեք ակտիվները, որոնց հաշվառումը Վարկային կազմակերպության հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց նրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:

1.25. Ակտիվը անհուսալի ճանաչելու օրը պետք է դուրս գրվի Վարկային կազմակերպության հաշվեկշռից՝ «Հատուկ պահուստի» հաշվից և Վարկային կազմակերպությունը շարունակում է հաշվառել այն հաշվեկշռի ծանուցման համապատասխան հաշիվներում:

Անհուսալի ակտիվների գծով ձևավորվում է միայն հատուկ պահուստ.

1.26. Ակտիվների դասակարգման չափանիշներն ամփոփվում են ստորև բերվող աղյուսակում:

Ակտիվի դասը	Օբյեկտիվ չափանիշ	Սուբյեկտիվ չափանիշ
Ստանդարտ	Ակտիվն աշխատող է և գտնվում է սպասարկման ընթացքում համաձայն պայմանագրի	Համապատասխանում է սույն կանոնակարգի 1.20.2 կետում տրված ստանդարտ ակտիվի սահմանմանը
Հսկվող	Չաշխատող է մինչև 90 օր	Համապատասխանում է սույն կանոնակարգի 1.21.2 կետում տրված հսկվող ակտիվի սահմանմանը
Ոչ ստանդարտ	Չաշխատող է մինչև 91-180 օր	Համապատասխանում է սույն կանոնակարգի 1.22.2 կետում տրված ոչ ստանդարտ ակտիվի սահմանմանը
Կասկածելի	Չաշխատող է 181-270 օր	Համապատասխանում է սույն կանոնակարգի 1.23.2 կետում տրված կասկածելի ակտիվի սահմանմանը
Անհուսալի	Չաշխատող է 271 և ավելի օր	Համապատասխանում է սույն կանոնակարգի 1.24.2 կետում տրված անհուսալի ակտիվի սահմանմանը:

1.27 Ապահովվածություն չունեցող (բլանկային) ակտիվները, տրման պահին դասակարգվում են անհուսալի և նույն օվա ընթացքում դուրս են գրվում Վարկային կազմակերպության հաշվեկշռից:

## 2. Ակտիվների դասակարգումը

2.1. Վարկային կազմակերպությունը դասակարգում է ակտիվներն ամիսը մեկ անգամ՝ հաշվետու ամսվա վերջին բանկային օրը, ինչպես նաև բացառիկ դեպքերում ամսվա ցանկացած օր, սույն կանոնակարգի 1.26 կետի աղյուսակին համապատասխան:

2.2. Այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում առկա են տարբերություններ, ապա Վարկային կազմակերպության համար առաջնային է առավել խիստ չափանիշը:

### 3. Ընդհանուր և հատուկ պահուստների ձևավորումը

3.1. Վարկային կազմակերպությունն ընդհանուր պահուստը ձևավորում է ստանդարտ ակտիվների գումարի 1%-ի չափով:

3.2. Վարկային կազմակերպությունը հատուկ պահուստը ձևավորում է յուրաքանչյուր հսկվող ակտիվի համար՝ 10%, ոչ ստանդարտ ակտիվի համար 20%-ի, կասկածելի ակտիվի՝ 50%-ի և անհուսալի ակտիվի՝ 100%-ի չափով:

### 4. Չաշխատող ակտիվների գծով հաշվարկված (ստացվելիք) տոկոսների (և (կամ) տուժանքների) հաշվառումը

4.1. Որպես չաշխատող դասակարգվելու պահին՝ ակտիվի գծով հաշվարկված (ստացվելիք) և չհավաքագրված տոկոսները (և (կամ) տուժանքները) գրանցվում են «չճանաչված տոկոսային եկամտի» հաշվին:

4.1.1. Այն տոկոսները (և (կամ) տուժանքները), որոնք արդեն հաշվեգրվել են, սակայն չեն հավաքագրվել հաշվետու ժամանակաշրջանի (ակտիվների հերթական դասակարգման իրականացման տվյալ հաշվետու ամսվա) ընթացքում, «տոկոսային եկամուտ» (և (կամ) «եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից») հաշվից փոխանցվում են «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվին:

4.1.2. Այն տոկոսները (և (կամ) տուժանքները), որոնք հաշվեգրվել են նախորդ ժամանակաշրջանի (հաշվետու ամսվանը նախորդող ամիսների) ընթացքում, սակայն չեն հավաքագրվել, ճանաչվում են որպես ծախս գրանցվելով «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվին:

4.2. Չաշխատող ակտիվի նկատմամբ հաշվեգրման սկզբունքը վերականգնվում է միայն ժամկետանց հիմնական գումարի և տոկոսների, ինչպես նաև տուժանքները ամբողջովին մարելու դեպքում:

4.3. «Չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվում հաշվառվող՝ հաշվեգրված, բայց դեռևս չգանձված տոկոսները (և (կամ) տուժանքները) դուրս են գրվում հաշվեկշռից համապատասխան ակտիվի անհուսալի ճանաչելու (կամ ամբողջությամբ մարելու) պահին: Հաշվեկշռից դուրս գրելուց հետո Վարկային կազմակերպությունը դրանք հաշվառում է հաշվեկշռի ծանուցման «Դուրս գրված տոկոսներ վարկերից» հաշվում:

### 5. Ծանուցման հաշիվներում գրանցված ակտիվների և տոկոսների հաշվառումը

5.1. Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվը (կամ նրա մի մասը) մարվելու դեպքում.

5.1.1. Մարված գումարի չափով հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված ակտիվը (կամ նրա մի մասը)՝ թղթակցելով «հատուկ պահուստ» հաշվի հետ:

5.1.2. Վերականգնված ակտիվը (կամ նրա մի մասը) մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

5.1.3. Ակտիվների հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, Վարկային կազմակերպությունն ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է եկամուտների հաշվին:

5.2. Ծանուցման հաշիվներում հաշվառվող տոկոսների (կամ նրա մի մասի) դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

5.2.1. Ստացված գումարի չափով հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված տոկոսը (կամ նրա մի մասը)՝ թղթակցելով «տոկոսային եկամուտ» հաշվի հետ:

5.2.2. Վերականգնված տոկոսը (կամ նրա մի մասը) մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

5.3. Ծանուցման հաշիվներում հաշվառվող ակտիվները, տոկոսները (կամ նրանց մի մասը) և տուժանքները (կամ նրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից.

5.3.1. Վարկային կազմակերպության կողմից ակտիվի, տոկոսների (կամ նրանց մի մասի) և տուժանքների (կամ նրանց մի մասի) զիջելու (կամ ներելու) կամ

5.3.2. ակտիվի, տոկոսների (կամ նրանց մի մասի) և տուժանքների (կամ նրանց մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ ՀՀ օրենսդրությամբ **նախատեսված կարգով դադարելու կամ սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում:**

5.4. Եթե հաշվեկշռում հաշվառվող ակտիվները, տոկոսները (կամ նրանց մի մասը) և տուժանքները (կամ նրանց մի մասը) Վարկային կազմակերպության կողմից զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը և (կամ) հաշվեկշռից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ:

5.5. Սույն կանոնակարգի 5.3. և 5.4. կետերում նախատեսված դեպքերում Վարկային կազմակերպությունը յոթօրյա ժամկետում այդ մասին հայտնում է սպասարկող հարկային մարմնին:

5.6. Վարկային կազմակերպության կողմից ակտիվները, տոկոսների (կամ նրանց մի մասի) և տուժանքների (կամ նրանց մի մասի) զիջվելու համար Վարկային կազմակերպության գործադիր տնօրենը Վարկային կազմակերպության խորհրդին է ներկայացնում համապատասխան եզրակացություն, որի հիման վրա Վարկային կազմակերպության խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում նշված ակտիվների, տոկոսների (կամ նրանց մի մասի) և տուժանքների (կամ նրանց մի մասի) զիջվելու կամ ներելու վերաբերյալ:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. ՀՀ ԿԲ վերահսկողության ծառայությունը կարող է վերահսկողության արդյունքում պարտավորեցնել Վարկային կազմակերպությանն՝ ճշգրտելու ակտիվների դասակարգումը՝ «Կարգին» համաձայն:

6.2. Սույն կանոնակարգը մշակվել է բացառապես Վարկային կազմակերպության գործունեության կարգավորման և Վարկային կազմակերպության հարկային հաշվառման կարգավորման նպատակով և դատարանի, պետական կառավարման մարմինների, Վարկային կազմակերպության կամ նրա հաճախորդների, կամ բաժնետիրոջ, կամ որևէ այլ անձի կողմից սույն կանոնակարգի որևէ դրույթ կամ հասկացություն չի կարող մեկնաբանվել, վկայակոչվել կամ կիրառվել որպես Վարկային կազմակերպության և հաճախորդի (փոխառուի) միջև իրավահարաբերությունները կարգավորող կամ այդ հարաբերությունները սահմանափակող նորմ՝ պայմանագրի կնքման, կատարման, ժամկետի վերանայման, տոկոսագումարների ու տուժանքների հաշվարկման, գրավի և ցանկացած այլ հարցի վերաբերյալ: